

Ք Ն Ն Ա Ր Կ ՈՒ Մ Ն Ե Ր Д И С К У С С И И

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» Գ ԳՐԹԻ ԿԱ ԳԼԽԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գ. Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

«...Առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիայ, ի լեզու պանծալի, ի ստույգ յօդանալ նեմարանին վերաբանութեալն»¹։
Հնդդոված հատվածը խրթին է և ունի տարրեր մեկնաբանությունների։
Հմտ. «Մեծ Սահակ և Մեսրոպ մեզ առան ուղարկեցին Աղեքսանդրիա, պանծալի լեզուն սովորելու, իսկական նեմարանում կատարելագործվելու»²։

„Sahag le Grand et Mesrob nous envoyèrent a Alexandrie, pour étudier la langue savante et nous initier a la science philologique“³
(«Սահակ Մեծն ու Մեսրոպը ուղարկեցին մեզ Աղեքսանդրիա՝ սովորելու դիտական լեզուն և ծանոթանալու բանասիրական գիտությունը»)։

«...Для изучения в академии изящного языка и точного понимания филологии»⁴։

«...Для изучения в академии возвышенного языка и для близкого знакомства с науками»⁵։

«Сахак Великий и Месроп послали нас в Александрию для приобретения совершенного знания языка и для тщательного пополнения образования в академии. III, 62. Добавление об учителях...»⁶։

„Sahak the Great and Mesrop sent us to Alexandria to study elegant style and for accurate instruction at the academy. III, 62. Reflection on the Doctors...“⁷ («Սահակ Մեծն ու Մեսրոպն ուղարկեցին մեզ Աղեքսանդրիա՝ սովորելու նրբագեղ ոճը և ճշգրիտ ուսումնառություն ստանալու ակադեմիայում, Գ, ԿԲ, Մտորումներ վարդապետների մասին...»)։

„...Per rendere sublima la lingua, sia per formarsi accuratamente nelle dottrine analogiche dell' Accademia“⁸։ («Վեհապանծ լեզուն յուրացնելու կամ ստույգ կրթվելու Ակադեմիայի անալոգիայի ուսմունքի մեջ»)։

1 Մ Ո Վ Ս Է Ս Խ Ո Ր Ե Ն Ս Յ Ի. Պատմություն Հայոց, քնն. քն. Մ. Արեղեանի և Ս. Տառնիկեանի, լրացումները՝ Ա. Սարգսեանի. Երևան, 1991, էջ 343։

2 Մ Ո Վ Ս Է Ս Խ Ո Ր Ե Ն Ս Յ Ի. Պատմություն Հայոց, Թարգմանությունը՝ Ստ. Մալխասյանցի. Երևան, 1981, էջ 303, հմտ. և ծան. 329։

3 V. Langlois. Collection des Historiens anciens et modernes de l'Arménie. Paris, 1869, p. 168.

4 История Армении Моисея Хоренского, пер. Н. Эмша, М., 1853, с. 220.

5 История Армении Моисея Хоренского, новый пер. Н. Эмша, М., 1893, с. 203.

6 Мовсес Хоренаци. История Армении. Пер., введение и примечания Галюка Саркисяна, Ереван, 1990, с. 204.

7 Moses Khorenats'i. History of the Armenians. Translation and Commentary by R. W. Thomson. London, 1978, p. 336.

8 G. Traina. Il complesso di Trimalcione. Movses Xorenac'i e le origini del pensiero storico armeno. Venezia, 1991, p. 67.

«...Pour apprendre sur le modèle de cette académie, a ordonner comme il faut une langue magnilique»⁹. («...Սովորելու այդ ակադեմիայի օրինակով, կարգավորելու, ինչպես հարկն է, մեր վեհապանծ լեզուն»): «Վերաբանութեան» բառը Գ. Մարգսյանը և Ռ. Թոմսոնը հաջորդ վերնագրին են կցել՝ «վերաբանութիւն» ձևով, հետևելով Ն. Բյուզանդացու ուղղմանը (տարբերություններն են՝ «վերբանութեան», «վերծանութեան», «վերբանութիւն», «վերաբանութեամբ»): «Վերաբանութիւն ի վարդապետսն, յինքն...»¹⁰, Ստ. Մալխասյանցը նշում է. «Մենք այս ուղղումն բնորոշինք, բայց «վերաբանութիւն» բառը հասկանում ենք ոչ իբրև «վերջաբանութիւն» (հուն. ἀπολογία¹¹ կամ ἐπίλογος), այլ իբրև տառացի թարգմանություն հունարեն ἀναλογία-ի — անալոգիա, նմանություն, համեմատություն. այնինչ «վերջաբանությունը» չի հարմարվում»¹²: (Մալխասյանցը համարյա կրկնել է խորեն Ստեփանեի թարգմանությունը՝ չընդունելով միայն շարունակությունը¹³. «Վերջաբանութիւն իւր ուսուցիչներին...»): Սակայն իրականում Ստ. Մալխասյանցի թարգմանության մեջ այդ բառն արտահայտված չէ: Իսկ Խ. Ստեփանեն այն «վերջաբանութիւն» թարգմանելիս՝ որպես զուգահեռ բերում է «Պիտոյից գրքում» ἐπίλογος («վերջաբան») բառի «ի վերայ բանի» տարօրինակ թարգմանությունը¹⁴: Ռ. Թոմսոնը նշում է, որ «վերաբանութիւնը» որպես ἀναλογία-ի համարժեք դժվար մեկնաբանելի է, սակայն ἀναλογισμοί բայն ունի նաև «մտածել, խորհել» իմաստը, ուստի և «վերաբանութիւնը» նա թարգմանում է որպես reflection «մտորում»¹⁵:

Ըստ Մ. Շիրինյանի, «վերաբանութեան» բառի հիմքում τὸ λογικὸν տերմինն է, որն իմացաբանության, տրամաբանության և ճարտասանության ընդհանրացնող տեսության՝ «Ստոյայի» ուսումնական համակարգի երեք գլխավոր մասերից առաջինի անվանումն էր¹⁶, Հունարեն բառն այսպիսով ոչ թե պատճենված է որպես «բանականն» կամ «բանականութիւն», այլ ճիշտ վերարտադրված:

Իսկ Զ. Տրաինյան այդ բառը կրկին բացատրում է ἀναλογισ-ով, «որը ոչ միայն քերականական իմաստ ունի, այլև առնչվում է վերաբանության փոխտեղադրական հասկացությանը, այն է՝ ժամանակի և տարածության մեջ համեմատությանը. այդ իմաստը լավ ավանդված է հունական պատմագրության մեջ»¹⁷:

Մեր կարծիքով, «վերաբանութեան» բառի հիմքում կարելի է տեսնել հունարեն ἐπίλογισμός բառը (վեր նախածանցը ոչ միայն ἀνα-ի, այլև ἐπι-ի

⁹ Moïse de Khorène. Histoire de l'Arménie. Nouvelle traduction par Ann'e et Jean-Pierre Mahé. Gallimard, 1993, p. 710. Հմմտ. ծան. 19. «sur le mo'èle» արտահայտությամբ թարգմանված է «վերաբանութեան» բառը:

¹⁰ Մովսէս Խորենացի, էջ 343, տողատակի ծան.:

¹¹ Ἀπολογία իրականում նշանակում է զրատագովություն, պաշտպանություն:

¹² Մովսէս Խորենացի, ծան. 329:

¹³ Մովսէս Խորենացու Հայկական պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց և լուսարանեց Խորեն Ժ. վարդապետ Ստեփանէ. Ս. Պետերբուրգ, 1889, էջ 329, նաև ծան. 739:

¹⁴ Տե՛ս Գիրք պիտոյից. աշխատասիրությամբ Գ. Մուրադյանի. Երևան, 1993, էջ 31, 95, 124, 322:

¹⁵ Moses Khorenats'i, p. 336, n. 11.

¹⁶ Մ. Շիրինյան. Անտիկ ավանդույթների փոխակերպումը վաղ բյուզանդական եկեղեցական պատմագրության և հայ հին մատենագրության մեջ. «Աշտանակ» (Հայագիտական պարբերագիրք), Ա, Երևան, 1995, էջ 23—24, ծան. 31:

¹⁷ G. Traina. Op. cit., p. 67.

համարժեքն է), որը նշանակում է «հաշիվ, հաշվի առնելը, մտորում, կարծիք, դիտարկում, հետազոտություն», մասնավորապես՝ «ինդուկտիվ մտածողություն», ի հակադրություն «ապացույցի», ինչպես նաև «մտքի բարձրագույն աշխատանք» (higher reasoning) և այդ հիմաստով ավանդված է Ալեքսանդրիայի նորավատոնական դպրոցի կարկառուն դործիչ Պլոտինի մոտ¹⁸։

Այսպիսով, առանց ուղղումներ և տեղափոխություններ կատարելու, «ի հեմարանին վերաբանութեան» հասկանում ենք որպես «բարձրագույն գիտության դպրոցում», ինչպիսին էր Ալեքսանդրիայի նորավատոնական դպրոցը, հակառակ որ Ռ. Թոմսոնի կարծիքով խոսքը մեկ այլ՝ ճարտասանական դպրոցի մասին է, որտեղ, Ջաքարիա Հեմտոնի (V դարի երկրորդ կես) վկայությամբ, բազմաթիվ հայտնի աստվածաբաններ սովորել են քերականություն և ճարտասանություն¹⁹։

Նորավատոնական դպրոցը կարող էր կրել այդ մակդիրը, թեև գրականության մեջ այդպիսին գտնելու մեր ջանքերն արդյունք չտվեցին²⁰, Խորենացին իր հերթին կարող էր նման բնութագիր տալ դպրոցին՝ այդ բառը քաղելով որևէ հուշարձանի մեզ անհայտ թարգմանությունից, կամ էլ՝ հորինելով այն իրեն քաջ հայտնի և, հավանաբար, իր ուսումնառության տարիներին կիրառության մեջ եղած ἐπιστολιῶδες բառի կաղապարով։ Հիշենք, որ Խորենացու բնագրում առկա շորս հարյուր հունաբանություններից մոտ հարյուրի համար մեզ չի հաջողվել գուգահեռներ գտնել ո՞չ դասական (ինչպես մետրոպոլիս, այնպես էլ հետմետրոպոլիս), ո՞չ էլ հունաբան թարգմանություններում։ Ենթադրելով, որ գրանց մի մասի համար այդպիսի գուգահեռներ ժամանակի ընթացքում կարող են գտնվել այնպիսի թարգմանություններում, որոնք դեռևս պիտի հայտնաբերվեն, հրատարակվեն կամ վերստին ուշադիր ընթերցվեն, ընդունել ենք, որ մի զգալի թվով բառեր իրոք «հեղինակային կազմություններ» են (Վ. Առաքելյանն այդպես է բնութագրել մեր նշած հունաբանությունների մեծ մասը)։ Հնարավոր է նաև, որ այդ բառերից մի քանիսր որոշակի նեղ շրջանակներում խոսակցական լեզվի փաստ կարող էին լինել²¹։

ՆՃԲ-ում «վերաբանական» բառի համար օրինակ է բերված Հովհան Ոսկեբերանի մի ճառից, որի վերնագրի հապավումն է՝ «խչ» (նախ նշենք, որ ՆՃԲ-ում մեջբերված հատվածը՝ «Պատուականագոյն է քան մարգարիտ զոր կամիմ ածել ի վերաբանական անդնոց», մենք չգտանք ո՞չ թի խաչելություն տեառն», ո՞չ «Յիաղազս քնարանին և խաչին»²² ճառերում, ո՞չ էլ Հայսմավուրքի մեջ մտած՝ խաչին նվիրված մի ճառում²³)։ Այս դեպքում այն որոշակիորեն այլ հիմաստ ունի, բայց մեզ այնքան էլ համոզիչ չի թվում բառարանագիրների՝ «համեմատական, նմանական, խորհրդաւոր ἀναλογικός» բացատրությունը։ «Վերաբանութիւն» բառի մեր ենթադրած հիմաստին ավե-

¹⁸ H. G. Liddell, R. Scott. A Greek-English Lexicon, revised by H. St. Jones. Oxford, 1968, s. v.

¹⁹ Moses Khorenats'i, p. 336, r. 11.

²⁰ Sbe'u J. F. Biet. Essai historique et critique sur l'école juive d'Alexandrie, in 8°. Paris, 1854; C. Bigg. The Christian Platonism of Alexandria. London, 1886; H. Bois. Essai sur les origines de la philosophie judéo-alexandrine. Toulouse, 1890; Christian Schools of Alexandria.—Dublin Review, t. LX, 1864, p. 278 sq; J. Simon. Histoire de l'École d'Alexandrie. Paris, 1849; E. Desjardins. L'école d'Alexandrie et sa lutte contre le christ.—Études relig. hist. litt., t. III, 1861, p. 537—574; Ch. Kingsley. Alexandria and her Schools. London, 1854.

²¹ Sbe'u Գ. Ս. Մուրադյան. Մովսես Խորենացու «Պատմության» լեզվի հունաբան շերտը.—ՊԲՀ, 1993, № 1—2, էջ 93—94։

²² Ծովհաննու Ոսկեբերանի ճառք. Վեներիկ, 1861, էջ 195—213։

²³ Մատենադարան, ձեռ. № 1339, էջ 30բ—31ա, անվերնագիր։

լի համահունչ է նրա կիրառությունը «Պիտոյից դրքի» ուշ կցված հավելվածում. «Լսող եղեալ իմ խնդացուցանողն ձայնի և խոսակակից անհամատեղի վերաբանութեան»²⁴, Թեոփեոս այստեղ խոսքն աստվածային ձայնի, նրա վեհաշուք խոսքերի մասին է, որոնցից դրկվել է Ադամը (բարանութիւն. Զի՞նչպիսի բանս ասիցէ Ադամ ելանելով ի դրախտէն)։ ՆՂԲ-ի բացատրությունն է՝ «վերադոյն բան, հանձար, խորհուրդ, գիտութիւն», իսկ խորենացու խնդրո առարկա հատվածի համար տրվում են «վերջաբանութիւն, բովանդակութիւն, լրումն» իմաստները (հմտ. խ. Ստեփաննի թարգմանությունը)։

Բարդուղիմեոս վարդապետ Գևորգյանն²⁵ այն միտքն է հայտնում, որ խորենացին «քանզի անգէտք էին մերում արուեստի» խոսքերով ակնարկում է իմաստասիրությունը։ «Եթե այսպես, «վերաբանութեան» բառը յուր իսկական տեղումն է և նշանակում է «բնագանցական ուսումն, փիլիսոփայություն»։ Ն. Բյուզանդացու սրբագրությունը նա տնդոյնելի է համարում, որովհետև «վերաբանութիւն» Աղեքսանդրիայի «բարձր ուսումն-արուեստը» պիտի լիներ։

«Ճեմարան» բառը խ. Ստեփանն է Ստ. Մախաուանցը թարգմանել են «ճեմարան», Մ. Էմիր, Ռ. Թոմսոն, Գ. Ստոգսյան, Զ. Տրախան և Ժ.—Պ. Մահեն՝ «ակադեմիա»։ Վ. Լանգուայի մոտ այն արտադրված չէ։ Մենք առաջարկում ենք «դպրոց»։ Մագումով այն անշուշտ հունարեն *μαθηματικὴ* բառի թարգմանությունն է։ Բառացի նշանակում է՝ «շուրջը կամ այս ու այն կողմ քայլելու, ճեմելու վայր»։ Այն Արիստոտելի գլխավորած Լիկեոնի բակի կամ ճեմարանի անվանումն էր։ Այնտեղ է սկիզբ առել «պերիպատետիկների» փիլիսոփայական ուղղությունը։ Ժիշտ է, հայերեն բառը հունարենի պատճենում չէ. արտադրված չէ *μαθηματικὴ* («շուրջ», հունաբան թարգմանություններում՝ «պար») նախածանցը, սակայն բառի իմաստը հիմնականում արտահայտված է։

Եվ ահա, Փիլոն Ալեքսանդրացու մոտ կարդում ենք. «Արիստոտելս և որք ի ճեմարանէն»²⁶, Հրատարակիչ Ավգերյանը թարգմանել է լատիներեն *peripatetici*, սակայն չպահպանված հունարեն բնագրում կարող էր լինել *οἱ ἐκ τοῦ περιπατοῦ*։

Իսկ Գրիգոր Նազիանզացու «Ի Կեսարիոս եռուար իւր» ճառում դրված է. «Ո՞չ դարձարի Պլատոնի և Արիստոտելի և Պիտոնի և Դեմոկրիտեայ ոմամբք և Հերակլիտեայ և Անաքսագորի, Կիանթեայ և Եպիկուրացուցն և ոչ գիտեմ ոմամբք որք ի պաճնայի նեմաբանէն են և յակադեմիայ»²⁷, Հունարեն բնագրում «ճեմարան»-ին համապատասխանում է *μαθηματικὴ* բառը²⁸, Այդպես էր կոչվում այն դպրոցը, որից ծագում է ստոիկյան փիլիսոփայության անվանումը։ Մեջբերված հատվածը թույլ է տալիս հետևյալ եզրակացություններն անել։

ա) «Ճեմարանը» Ակադեմիան չէ։ «Ակադեմիա» էր կոչվում Աթենքում Պլատոնի հիմնած դպրոցը։ Իսկ հետադադում այն նշանակում էր ոչ թե առհասարակ «դպրոց», այլ «այլատոնական փիլիսոփայական դպրոց, ուղղություն»։ մեջբերված հատվածում առկա են և՛ ճեմարանը, և՛ ակադեմիան։

²⁴ Գրք պիտոյից, էջ 241։

²⁵ Բ. Գևորգյան. (Ճուղայանց). խորենացուն խորենացով պետք է հասկանալ. Վաղարշապատ, 1899, էջ 103—105։

²⁶ Փիլոնի երբայցեւոյ Մեկնութիւն յննդոց և ելից, աշխատասիրութեամբ Մկրտ. Աւգերեանց. Վենետիկ, 1826 էջ 188։

²⁷ Կ. Մուրադյան. Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ. Երևան, 1983, էջ 235։

²⁸ *Patrologiae Graecae cursus completus*, ed. J.-P. Migne. Brepols—Turnhout, t. 35. col. 781

բ) «Պերիպատոս» բառից ծագելով՝ «ճեմարան» չի կիրառվել որպես միայն նրա համարժեք։ Օրինակ՝ Մառյաթի անվանումը նույնպես թարգմանվել է «ճեմարան»։ Այդ բառը, մեր կարծիքով, ընդլայնված «դպրոց» իմաստն է ձեռք բերել, և Խորենացու մոտ էլ այն պետք է դիտել ոչ որպես Ալեքսանդրիայի դպրոցի անվանման հայերեն համարժեք, այլ՝ ընդհանրապես «դպրոց» իմաստով։

դ) Խորենացին գրելիս անշուշտ աչքի առաջ ունեցել է Գրիգոր Նազիանզացու ճառի վերոբերյալ հատվածը. «Որք ի պանծալի ճեմարանէն են»։ Ի դեպ, կարող է թվալ, թե նրա մոտ «պանծալի» բառը դարձել է «լեզու» բառի որոշիչ (այդ մասին ստորև)։

Խորենացու խնդրո առարկա հատվածի համար գոյություն ունի ևս մեկ զուգահեռ՝ Փիլոնի Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ» ճառում²⁹. «Եւ բազմաց և այլոց դէպ է լեզու եղգրիտ և ստուգ յօղանալ, և այնոցիկ, ոյք յոյժ ընդելք... քանզի կեննելք և տատակք և ծիծեռնուկք ոչ միայն երգել բնաւորեալ են այլ և յօղաւոր ձայնիւ երգեն» (սեւ պատահում է, որ շատ ուրիշների (խոսքը թուրքերի մասին է—Գ. Մ.) ձայնը հոգավորվում է (արտաբերվում է) ճիշտ և հստակ... քանզի կեննելքն ու տատակները և ծիծեռնակները ոչ միայն երգելու սովորություն ունեն, այլև երգում են հոգաբաշխ ձայնով)։ Ուստի «յօղանալ» իմաստային պատճենում է օրթոօս («պարզ արտաբերել, հոգաբաշխ հնչյուններ արձակել») բայի կրավորական ձևի (օրթոս—«հոգ»)։

Այսպիսով, Խորենացին ունեցել է երկու ոճական աղբյուր. Գրիգոր Նազիանզացի՝ «որք ի պանծալի ճեմարանէն են» և Փիլոն՝ «դէպ է լեզու ճշգրիտ և ստուգ յօղանալ»։

Մեր համոզմամբ, Խորենացու մոտ բառերի քերականական կապերը պետք է լինեն նույնը, ինչպես և բերված հատվածներում, անկախ նրանց դիրքից։ Բերենք նման դեպքերի այլ օրինակներ։

Ինչպես նկատել է Գր. Խալաթյանցը³⁰, «Աղեքսանդրի վարքում» կա «պարիսպս անձեռագործս ունելով» արտահայտությունը³¹, իսկ Փիլոնի «Կենան իմաստնոց» ճառում՝ «աուցեալ... ամենազան պտղոց քաջաբերութիւն» («Սողոմոնայեցոց» երկրի մասին է)³², Խորենացին համադրել է այդ երկուսը՝ համարյա անփոփոխ թողնելով յուրաքանչյուրը. «...ամենազան պտղովք աուցեալ և անձեռագործ պարսպեալ նեղոսի» (Գ, ԿԲ)։

Մեկ այլ տեղում (Բ, Լ)՝ «...ի մարդկանէ ոչ եղև հնար բժշկութեան, ետ տանել նմա թուղթ աղաչանաց, զալ և բժշկել զնա»։ Գ. Խալաթյանցը զուգահեռներ է բերել Ղերուբնայիո. «Գրեաց այնուհետև թուղթ և տալ տանել առ Քրիստոս» և Եվսեբիոսի «Եկեղեցու պատմությունից»։ «Ի մարդկանէ չիք նորա բժշկութիւն»³³։

Ինչպես տեսնում ենք, երկու աղբյուրից վերցված բառերը միահյուսված են, սակայն պահպանված են յուրաքանչյուրի ներքին կապերն ու տրամաբանությունը։

²⁹ Փիլոնի Երրայեցույ Ա. Բ. Յաղագս նախախնամութեան, Գ. Յաղագս կենդանեաց, աշխ. Մկրտ. Աղեքսանց. Վենետիկ, 1822, էջ 128, հմտ. նաև Գ. Халатянц. Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского. Ч. II, М., 1903, с. 123. Տե՛ս նաև Մովսէս Խորենացի, էջ 343, տողատակ։

³⁰ Գ. Халатянц. Указ. соч., с. 129.

³¹ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացույ, աշխ. Հ. Սիմոնյանի, Երևան, 1989, էջ 139.

³² Փիլոնի Հերրայեցույ ճառք որոց հեղին բնագիրք հասին առ մեղ. Վենետիկ, 1892, էջ 68.

³³ Գ. Халатянц. Указ. соч., с. 28.

Այսպիսով, եթե մեզ հետաքրքրող հատվածում էլ գործ ունենք նմանատիպ դեպքի հետ, ուրեմն այն պետք է ընթերցել հետեյալ կերպ. «...ի լեզու ստույգ յօդանալ»⁸⁴ ի պանծալի ճեմարանին վերաբանութեան» («որպեսզի [մեր] լեզուն (այսինքն՝ մեր իմացած հունարեն լեզուն) ճշգրիտ կերպով հոգավորվի (ճշգրիտ կերպարանք ստանա, կատարելագործվի) բարձրագույն գիտության հռչակավոր դպրոցում»):

Զէ՞ որ մինչ այդ հորենացին ասում է, որ Սահակն ու Մեսրոպը կրկին թարգմանեցին մեր թարգմանիչների բերած «զստույգ օրինակս Գրոց»։ «Բայց քանզի անդէտք էին մերումս արուեստի՝ ի բազում մասանց թերադեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ Մեծին Սահակայ և Մեսրոպայ դմեղ...»:

Ճիշտ է, մեր առաջարկած տեղափոխությունները բռնազբոսիկ են թվում, սակայն հորենացու լեզվին հատուկ է քերականորեն կապակցված բառերի ընդհարկումն այլ բառերով. օրինակ՝ «յանչալից հրաժարեալ ի ցրտոյ և ի տօթոյ», «աճծնաօրոճ պարսպեալ նեղոսիւ», «գրեռնաբաժնս պսակելով գրաստս» (Գ, ԿԲ)։ Բերենք նաև Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության առաջաբանում հիշատակված դեպքերը. «Ջանդուլ հոգւոյն ի վերայ իմացուածոց քոց շաբժմունս», «Ի քաջէն զրկեալ նովուէ և հովուակցէ», «Ի մերոյս վերայ շահատակեալ տեղութեան», «Ոյ արտաքուստ ուստեք այստղիկ ի ներքս ածեալ խորհեցան օժանդակութիւնս իմաստից», «Կամիմ գնոցա կշտամբութեան յարմարել բանս», «Ջանդրէն քոյոյն յուսալով դարձ»⁸⁵:

Իհարկե, այս բոլոր հատվածներում բառերի կապը մթագնված չէ տեղափոխությամբ, ինչը չի կարելի ասել մեզ հետաքրքրող հատվածի մասին։ Այնտեղ բառերի տեղափոխություններն այնքան բարդ են, որ նրանց կապերը որոշ չափով մթագնվել են, ինչն էլ հատվածը դարձրել է մութ և դժվար մեկնաբանելի։

Սակայն որքան էլ արտասովոր թվա մեր առաջարկած մեկնաբանությունը, մեզ չի բավարարում ուվանդական ընթերցումը, բայց որի «պանծալի»-ն «լեզու» բառի որոշիչն է, և բառերի շարադասությունն արտացոլում է նրանց քերականական և տրամաբանական կապերը։ Փորձենք պատճառաբանել։

ա) Հատվածը դառնում է թերի. մեկ բայական ձևը՝ «յօդանալ» անորոշ դերձյալը, սովորաբար թարգմանում են երկուսով՝ «սովորելու, կատարելագործվելու», «для изучения, понимания», «для изучения, знакомства», «для приобретения, пополнения», «éludier, nous initier», «to study, for instruction», «per rendere... etc., per formarsi», «pour apprendre, à ordonner»:

բ) Հստակ չեն նախդիրների տեղն ու դերը և քերականական կապերն ընդհանրապես. «ի» նախդիրը կրկնվում է երեք անգամ՝ «ի լեզու», «ի յօդանալ», «ի ճեմարանին»։ Կարծես թե մեկն ավելորդ է։

գ) «Յօդանալ» բայն ընկալվում է բոլորովին այլ իմաստով՝ «սովորել», և որպես անցողական բայ. «լեզուն» նրա տրամաբանական ենթակայից դառնում է տրամաբանական ուղիղ խնդիրը, իսկ տրամաբանական ենթակա դառնում է ենթադրյալ «մենք»-ը։

Նշված խոչընդոտները, թվում է, գերակշռում են մեր մեկնաբանությունն ընդունելուն խանգարող միակ խոչընդոտին, այն է՝ բառերի անսովոր դասավորությունը։

⁸⁴ Հմմտ. նաև «ի յօդանալ» տարբերակը. Մ ո վ ս է ս հ ո Ր Ե Ն ա Յ Ի, էջ 343, տողաւաւի։

⁸⁵ Մ ո վ ս Ե ս հ ո Ր Ե Ն ա Յ Ի, էջ 57։